Հավելված

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի

նախագահի 2023 թվականի նոյեմբերի

23 -ի N 593 -Լ հրամանի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

REPUBLIC OF ARMENIA

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵ**

CIVIL AVIATION COMMITTEE

ԱՎԻԱՑԻՈՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ԲԱԺԻՆ

PEL DIVISION

# ՕԴԱՆԱՎԻ ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՎԿԱՅԱԳՐՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

# AIRCRAFT MAINTENANCE STAFF LICENSING MANUAL

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

First Edition-2023

# Ցանկ


| | |
|---|---|
| Գործող էջերի ցանկ........................................................................................................ | 3 |
| Ձեռնարկում արված փոփոխությունների ցանկ............................................................... | 4 |
| Նախաբան.......................................................................................................................... | 5 |
| Լիազոր մարմին................................................................................................................. | 6 |
| Փաստաթղթերի պահպանում............................................................................................ | 7 |
| ՓԱՐԹ-66 վկայական ստանալու համար պարտադիր պահանջ.................................. | 8 |
| ՓԱՐԹ-66 օդանավի տեխսպասարկման վկայական....................................................... | 9 |
| Արտոնություններ.............................................................................................................. | 11 |
| Արտոնությունների կիրառման սահմանափակումներ.................................................... | 13 |
| Վկայականի գործողության ժամկետ.................................................................................. | 14 |
| Ազգային վկայականի փոխարկում ՓԱՐԹ-66 վկայականով.......................................... | 15 |
| Նոր ՓԱՐԹ-66 վկայականի տրման գործընթաց............................................................ | 17 |
| Վկայականում լրացուցիչ արտոնությունների` կատեգորիաների/ենթակատեգորիաների ավելացման գործընթաց...................... | 22 |
| Վկայականում նոր օդանավի տիպի որակավորում ավելացնելուգործընթաց.......... | 28 |
| Վկայականում ընդգրկված սահմանափակումը հանելու գործընթաց........................ | 33 |
| Վկայականի փոխարինում ժամկետի երկարացման նպատակով................................ | 34 |
| Վարչության կողմից անցկացվող քննություններ .......................................................... | 35 |
| Քննական զեղչեր................................................................................................................. | 36 |
| Վկայականի գործողության կասեցում, դադարեցում կամ սահմանափակում.......... | 37 |
| Օդանավի տիպի ուսուցման դասընթացի թույլտվություն (ոչ ՓԱՐԹ-147 կազմակերպության կողմից)................................................................................. | 38 |
| Այլ պետությունների կողմից տրված վկայականների ճանաչում ................................. | 39 |
| Գլխավորվարչության որոշումների բողոքարկման կարգ.............................................. | 40 |
| Հավելված............................................................................................................................. | 41 |

## Գործող էջերի ցուցակ

| Էջ | Հրապ # | Վեր.# | Ամսաթ. | Էջ | Հրապ # | Վեր.# | Ամսաթ. | Էջ | Հրապ | Վեր.# | Ամսաթ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |

**13.11.2023**

## Ձեռնարկում արված փոփոխությունների ցուցակ

| Փոփոխության h/h | Փոփոխության ամսաթիվը | Փոփոխված էջերի համարները | Փոփոխության պատճառը | Փոփոխություն Կատարողի ԱԱՀ | Ստորագրություն |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |

# ՆԱԽԱԲԱՆ

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն (այսուհետև՝ Կոմիտե) ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմին է օդանավերի և աերոնավտիկական արտադրանքների, բաղադրամասերի ու սարքավորումների թռիչքային պիտանիության պահպանման և այդ խնդիրներում ներգրավված կազմակերպությունների ու անձնակազմի վկայագրման բնագավառում:
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի ապրիլի 8-ի թիվ 8-Ն հրամանով Հայաստանի Հանրապետությունում ընդունվել է Թռիչքների անվտանգության Եվրոպական գործակալություն կողմից մշակված և Եվրոհանձնաժողովի կողմից հաստատված «Վկայագրող մասնագետներ-ՓԱՐԹ 66» կանոնակարգը:

Ավիացիոն մասնագետների սերտիֆիկացման բաժինը (այսուհետև՝ ԱՄՍԲ) մշակել է ՓԱՐԹ-66 վկայականի տրման ձեռնարկ”-ի 3-րդ հրատարակությունը հիմնվելով Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպության (այսուհետև՝ ԻԿԱՕ) հավելված 1-ի, Եվրոհանձնաժողովի № 1321/2014 որոշման III-րդ Հավելվածի ՝ ՓԱՐԹ-66 վրա: Սույն ձեռնարկը մշակելիս կատարվել է համեմատական վերլուծություն ԻԿԱՕ-ի չափորոշիչների և ՓԱՐԹ-66-ի պահանջների և դրույթների համապատասխանության մասով:
Այս ձեռնարկը մանրամասնում է օդանավի ՓԱՐԹ-66 տեխսպասարկման վկայական ստանալու պահանջները, վկայական կրողի արտոնությունները, ադմինիստրատիվ գործընթացները՝ վկայական տալու, ազգային վկայականը ՓԱՐԹ-66-ով փոխարկելու և նրա մեջ փոփոխություններ մտցնելու պահանջների մասին, ինչպես նաև վկայականի տրման նպատակով համապատասխան քննություն իրականացնելու ընթացակարգերը: ԱՄՍԲ բոլոր աշխատակիցները պարտավոր են ծանոթ լինել ՓԱՐԹ-66-ի պահանջներին և ձեռնարկում նկարագրված գործընթացներին:
ԻԿԱՕ-ի և ԹԱԵԳ-ի պահանջների փոփոխությունների դեպքում, ինչպես նաև անհարժեշտության դեպքում, ձեռնարկում կատարվելու են լրացումներ և փոփոխություններ: ԹԱԵԳ-ի պահանջների փոփոխությունների դեպքում նրանք ենթակա են համեմատական վերլուծության ԻԿԱՕ-ի դրույթների հետ, համապատասխանության դեպքում միայն նրանք մշակվում և ընդգրկվում են ձեռնարկում:
Արված փոփոխությունների մասին ԱՄՍԲ բոլոր աշխատակիցները տեղեկացվում են:

ՓԱՐԹ-66 վայականի տրման պահանջները և ընթացակարգը հրապարակված են Կոմիտեի ինտերնետային կայքում (www.gdca.am):

## ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆ

Ըստ ՀՀ տարածքային կառավարման եվ ենթակառուցվածքների նախարարի 2023թ. Հունիսի 14-ին թիվ 06-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ավիացիայի մասնագետներին վկայականների տրամադրման կարգը (licensing) և թռիչքային անձնակազմի, օդանավի տեխնիկական սպասարկման մասնագետ ների և օդային երթևեկության կառավարման կարգավարների մասնագիտական գիտելիքների և ունակությունների ստուգման նպատակով անցկացվող տեսական թեստավորման ընթացակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2012 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 212-Ն և 2015 թվականի մարտի 27-ի թիվ 70-Ն հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին», օդանավի տեխնիկական սպասարկման մասնագետի վկայականը տրվում է կոմիտեի ԱՄՍԲ կողմից:

Ավիացիոն տեխսպասարկման մասնագետը վկայական ստանալու, դրա գործողության ժամկետը երկարաձգելու, վկայականի վերականգման, կրկնօրինակ ստանալու, դրա մեջ համապատասխան որակավորման վերաբերյալ նշումներ ստանալու և վկայականի փոխարինման համար դիմում և հայտ է ներկայացնում (Ձև 19) Կոմիտե:

Վկայականը տրվում է ԱՄՍԲ-ի համապատասխան որոշման հիման վրա, հինգ տարի ժամկետով: Վկայական ստանալու համար ներկայացվող հայտերի քանակը չի սահմանափակվում:

Վկայականը ստորագրվում է Կոմիտեի ԱՄՍԲ-ի համապատասխան կոմպետենտություն ունեցող աշխատակցի կողմից, իսկ նրա բացակայության դեպքում փոխարինողի կողմից և հաստատվում կոմիտեի կլոր կնիքով:

ԱՄՍԲ-ի կողմից վկայականի կրկնօրինակը տրվում է վկայականի կորստի, վնասվելու կամ վկայականի տիրոջ անունը և/կամ ազգանունը օրենքով սահմանված կարգով փոխելու դեպքում:

Վկայականի գործողության ժամկետը լրանալուց հետո, կամ, երբ վկայականում անհրաժեշտ է կատարել նոր գրառումներ, այն փոխարինվում է նորով:

## ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Յուրաքանչյուր տրված ՓԱՐԹ-66 վկայականի համար ԹՊՎ-ում կազմվում է առանձին գործ, որի մեջ ընդգրկվում են հետևյալ փաստաթղթերը.

1. «Ձև 19» հայտ վկայական ստանալու կամ փոփոխություններ մտցնելու համար, կից փաստաթղթերով;
2. Վկայականի պատճենը, ցանկացած փոփոխություններով;
3. Համապատասխան բոլոր փաստաթղթերի պատճենները (անձնագիր, դիպլոմ, աշխատանքային գրքույկ, ազգային վկայական);
4. Բացառությունների և վերահսկման մանրամասնությունները;
5. Վկայականի տիրոջ վերաբերյալ այլ լիազոր մարմինների կողմից ստացված ցանկացած տեղեկություն;
6. ԱՄՍԲ-ի կողմից ընդունած քննությունների գրառումները;
7. Տրված Օդանավի տիպի որակավորման արձանագրությունները:
8. ՓԱՐԹ-66 վկայականի տրման արձանագրությունները;
9. Փոխարկման արձանագրությունը ազգային վկայականից ՓԱՐԹ-66–ի անցնելիս;
10. Տրված Քննական զեղչերի արձանագրությունները:

**(a)** 1-5 կետերի գրառումները պետք է պահվեն առնվազն հինգ տարի վկայականի գործողության ժամկետի ավարտից հետո:
**(b)** 6-10 կետերով սահմանված գրառումները պահվում են անժամկետ:

Անհատական գործի սկզբում պետք է լինի ցուցակ, որում պետք է նշվեն առկա փաստաթղթերը:

Գործերը պահվում են փակ պահարանում, սահմանափակ անձանց մուտքի իրավունքով: Լրացվում է հատուկ գրանցամատյան տրված ՓԱՐԹ-66 վկայականների համար: Տրված

վկայականների և այլ փաստաթղթերի հաշվառման ու պահպանման համար ԱՄՄԲ պետը նշանակում է պատասխանատու մասնագետ:

## ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋ ՓԱՐԹ-66 ՎԿԱՅԱԿԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Օդանավի տեխսպասարկման վկայականի համար դիմորդը պետք է լինի առնվազն 18 տարեկան: Հավաստագրելու արտոնություն ստանալու համար 21 տարեկան:

## ՓԱՐԹ-66 ՕԴԱՆԱՎԻ ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Ավիացիոն մասնագետի վկայականը (այսուհետ՝ վկայական) փաստաթուղթ է, որն իրավունք է տալիս վկայական կրողին դրա մեջ նշված որակավորման նիշերին համապատասխան իրականացնել մասնագիտական գործառույթներ:

Վկայականը կազմվում է հատուկ պաշտպանվածություն ունեցող սպիտակ գույնի թղթից և բաղկացած է 8 էջից, յուրաքանչյուրը Ա 7 (105x74 մմ - ISO 216 միջազգային ստանդարտ) չափի թղթից, որի առաջին էջը հանդիսանում է տիտղոսաթերթ, իսկ մնացած 7-ը լրացման համար են: 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ էջերի ներքևի ձախ անկյունում դրվում է վկայականի համարը, իսկ աջ անկյունում՝ էջի հերթական համարը: Վկայականի տիտղոսաթերթը լրացվում է հայերեն և անգլերեն լեզուներով, իսկ 2-ից 8-րդ էջերը լրացվում են անգլերեն լեզվով:

1. Օդանավի տեխսպասարկման վկայականը ընդգրկում է հետևյալ կատեգորիաները.
    - A կատեգորիա
    - B1 կատեգորիա
    - B2 կատեգորիա
    - B2L կատեգորիա
    - B3 կատեգորիա
    - L կատեգորիա
    - C կատեգորիա

2. A,B1, B2L և L կատեգորիաները բաժանվում են ենթակատեգորիաների՝ կապված օդանավերի կամ ուղղաթիռների, տուրբինային կամ մխոցային շարժիչների համադրումից: Այդ ենթակատեգորիաներն են.
    - A 1 և B1.1 Տուրբինային օդանավեր
    - A 2 և B1.2 Մխոցային օդանավեր
    - A 3 և B1.3 Տուրբինային ուղղաթիռներ
    - A 4 և B1.4 Մխոցային ուղղաթիռներ
    - L1C Կոմպոզիտային սավառնակ
    - L1 Սավառնակ
    - L2C Շարժիչով կոմպոզիտային սավառնակ և ԵԼԱ1 օդանավեր
    - L2 Շարժիչով սավառնակ և 1200 կգ և ցածր վերթիռային զանգվածով օդանավ
    - L3H Տաքօդային օդապարիկ
    - L3G Գազային օդապարիկ
    - L4 Տաքօդային օդանավ
    - L4G ԵԼԱ2 գազային օդանավ
    - L5 ԵԼԱ2-ից բացի այլ գազային օդանավ
    - B2L Ավիոնիկ որևէ համակարգ, այն պետք է ներառի տվյալ համակարգերից առնվազն մեկը
        - Հաղորդակցություն/ նավիգացիա
        - Սարքավորումներ
        - Ավտոպիլոտ
        - Շրջակա մոնիթորինգ
        - Կորպուսային համակարգեր

3. B3 կատեգորիան կիրառելի է չճնշարկվող, մխոցային շարժիչով, 2000 կգ առավելագույն թռիչքային զանգված ունեցող օդանավերի համար:

Օդանավի տեխսպասարկման վկայականի տիրոջը չի սահմանափակվում ունենալ միայն մեկ կատեգորիա. Որակավորման պահանջների բավարարման դեպքում, ցանկացած համադրությամբ կատեգորիաներ կարող են տրվել:

# ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**1.** A կատեգորիայի մասնագետի վկայական ունեցողին թույլատրվում է տալ տեխսպասարկման հավաստագիր փոքր պլանավորված պրոֆիլակտիկ սպասարկման աշխատանքներ կատարելուց և մանր անսարքությունները վերացնելուց հետո, որոնք ընդգրկված են լիազորությունների հավաստագրում, համաձայն ՓԱՐԹ-145-ի 145.A.35 կետի: Հավաստագրելու արտոնությունները պետք է սահմանափակվեն այն աշխատանքներով, որոնք կատարվում են լիազորությունների հավաստագիր տված տեխսպասարկան կազմակերպությունում՝ անձամբ վկայականի տիրոջ կողմից:

**2.** B1 կատեգորիայի վկայականը ունեցողին թույլատրվում է տալ տեխսպասարկման հավաստագիր և գործել որպես B1 աջակցող անձնակազմ/մասնագետ.

- Օդանավի, շարժիչների, մեխանիկական և էլեկտրական համակարգերի վրա կատարած աշխատանքներում
- Ավիոնիկ համակարգերում կատարել պարզ ստուգումներ՝ նրանց աշխատունակությանը համոզվելու համար, առանց անսարքության պատճառը վերլուծելու:

**3.** B2 կատեգորիայի վկայականը ունեցողին թույլատրվում է.

I. Տալ Տեխսպասարկման հավաստագիր և գործել որպես B2 աջակցող անձնակազմ/մասնագետ հետևյալում՝

- ավիոնիկ և էլեկտրական համակարգերում տեխսպասարկման իրականացում, և
- Շարժիչների վրա և մեխանիկական համակարգերում պահանջվող էլեկտրական և ավիոնիկ պարզ աշխատունակություն հաստատող ստուգումների իրականացում, և

II. Տալ Տեխսպասարկման հավաստագիր փոքր պրոֆիլակտիկ գծային սպասարկումներից և մանր անսարքությունների վերացումից հետո, որոնք ներառված են լիզորությունների հավաստագրում, տրված ըստ ՓԱՐԹ-145 –ի 145.A.35 կետի: Հավաստագրելու արտոնությունները սահմանափակվում են այն աշխատանքներով, որը տված է տեխսպասարկման կազմակերպության կողմից կոնկրետ վկայականի տիրոջ համար և սահմանփակված են B2 վկայականում ներառած որակավորումներով:

Բ2 կատեգորիան ենթակատեգորիաների չի բաժանվում :

**4.** B2 L կատեգորիայի վկայականը ունեցողին թույլատրվում է.

Տալ Տեխսպասարկման հավաստագիր և գործել որպես B2 աջակցող անձնակազմ/մասնագետ հետևյալում՝

- Հաղորդակցություն/ նավիգացիա
- Սարքավորումներ
- Ավտոպիլոտ
- Ծրջակա մոնիթորինգ
- Կորպուսային համակարգեր

5. B3 կատեգորիայի վկայական ունեցողին թույլատրվում է տալ տեխսպասարկման հավաստագիր և գործել որպես B3 աջակցող անձնակազմ/մասնագետ.

- Օդանավի, շարժիչների, մեխանիկական և էլեկտրական համակարգերի վրա կատարավող աշխատանքներում
- Ավիոնիկ համակարգերում կատարել պարզ ստուգումներ՝ նրանց աշխատունակությանը համոզվելու համար, առանց անսարքության պատճառը վերլուծելու:

6. C կատեգորիայի վկայական ունեցողին թույլատրվում է տալ օդանավի տեխսպասարկման հավաստագիր բազային սպասարկումից հետո: Այդ արտոնությունը գործում է ամբողջական օդանավի վրա:

7. L կատեգորիայի վկայական ունեցողին թույլատրվում է տալ տեխսպասարկման հավաստագիր օդապարիկների և սավառնակների սպասարկման նպատակով

## ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

Վկայականի տերը չպետք է կիրառի տրված արտոնությունները եթե չկա.

1. համապատասխանություն ՓԱՐԹ-Մ և ՓԱՐԹ-145 կազմակերպություններում կիրառվող պահանջներին;
2. նախորդ երկու տարվա ընթացքում (երկուսից մեկը) վեց ամսվա աշխատանքային փորձառություն՝ վկայականում նշված արտոնությունների կիրառմամբ, կամ, համապատասխանություն արտոնությունների տրման պահանջներին;
3. բավարար համապատասխանություն տվյալ օդանավի վրա տեխսպասարկում հավաստագրելու համար;
4. ունակություն՝ կարդալ, գրել և խոսել հասկանալի մակարդակով այն լեզվով, որով գրված է տեխնիկական գրականությունը և որով անհրաժեշտ է տալ օդանավի տեխսպասարկման հավաստագիրը:

## ՎԿԱՅԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

ՓԱՐԹ-66 վկայականի գործողության ժամկետը 5 տարի է՝ տրման կամ փոխարինման պահից:

## ԱԶԳԱՅԻՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՓՈԽԱՐԿՈՒՄ ՓԱՐԹ-66 ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐՈՎ

ԱՄՍԲ ազգային վկայականներից անցում ՓԱՐԹ-66 վկայականների պլանավորում է կատարել աստիճանաբար: Ազգային վկայականների տալը՝ նախկին կանոնակարգով դադարեցվել է 2013թ օգոստոսի 12-ից: Ազգային վկայականի ժամկետի ավարտից հետո, հայտ ներկայացնող մասնագետները կստանան նոր տիպի ՓԱՐԹ-66 վկայականներ, առանց լրացուցիչ պահանջների: Սակայն դա կարող է հանգեցնել վկայականում որոշակի սահմանափակումների մտցման, որը կապված է ազգային և ՓԱՐԹ-66-ի պահանջների տարբերությամբ: Այդ սահմանափակումները հանելու համար անհրաժեշտ կլինի հանձնել քննություններ և համապատասխանել փորձի պահանջներին:

Ազգային որակավորում ունեցող մասնագետի վկայականը փոխարկվում է ՓԱՐԹ-66 վկայականի առանց լրացուցիչ քննությունների (համաձայն ՓԱՐԹ-66-ի ենթամաս D-ի 66.B.305 կետի): Փոխարկման համար ԱՄՍԲ-ն համեմատում է հավաստագրող մասնագետների ազգային որակավորումների, նրանց բազային կրթության և ՓԱՐԹ-66-ի Հավելված I-ում ներկայացված հիմնական գիտելիքների պահանջների միջև:

Դիմորդը ազգային վկայականը փոխարկելու համար ներկայացնում է դիմում և հայտ (Ձև 19) ՔԱԿ ԱՄՍԲ: Հայտին կից ներկայացվում է անձնագիր, ազգային վկայականը, ավարտած ուսումնական հաստատությունների դիպլոմները և նրանց պատճենները, ինչպես նաև քաղվածք աշխատանքային գրքույկից, կամ աշխատանքային փորձը հաստատող այլ փաստաթղթեր: Դիմումը և հայտը ներկայացվում են ՔԱԿ-ի ընդհանուր բաժին: Փոխարկումը կատարվում է համաձայն ՓԱՐԹ-66-ի ենթամաս D-ի 66.B.305 կետի:

Ներկայացրած փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո՝ եթե հիմքերը բավարար են, դիմորդին տրվում է ՓԱՐԹ-66 վկայական: Վկայական տալու համար ԱՄՍԲ համապատասխան աշխատակցի կողմից կազմվում է է *Փոխարկման արձանագրություն* (Ձև 66/4), որի մեջ լրացվում են.

1. Անուն, Հայրանուն, Ազգանուն;
2. Ներկայացնող կազմակերպությունը և հասցեն (եթե կա);
3. Ավարտած ուսումնական հաստատությունները և որակավորումները;
4. Ազգային վկայականի համարը;
5. Ինչ կատեգորիայի վկայականի է փոխարկվում ազգային վկայականը;
6. Ազգային վկայականում առկա օդանավի տիպերի որակավորումները;
7. Ինչ սահմանափակումներ են մտցվում փոխարկումից հետո;
8. Ինչ քննություններ պետք է հանձնել սահմանափակումները հանելու համար;
9. Հեկուցագիրը կազմող մասնագետների եզրակացությունը, ստորագրությունները;
10. ԱՄՍԲ աշխատակցի ստորագրությունը:
11. Տրված ՓԱՐԹ-66 վկայականի համարը;
12. Ամսաթիվը:

Վկայականը համակարգչային եղանակով կազմվում, տպվում, հաստատվում և տրվում է մասնագետին: Վկայանանի պատճենը և Փոխարկման արձանագրությունը կցվում են ԱՄՄԲ-ում պահվող մասնագետի անձնական գործին:

Վկայականում առկա սահմանափակումները հանելու համար տես՝ ***ՕԴԱՆԱՎԻ ՏԻՊԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՄՏՑՆԵԼՈՒ, ԿԱՄ, ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ ՀԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ*** բաժինը:

## ՆՈՐ ՓԱՐԹ-66 ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Օդանավի տեխսպասարկման մասնագետի վկայականի հավակնորդը պետք է կոմիտե ներկայացնի դիմում, լրացված հայտ՝ Ձև 19 և համապատասխան փաստաթղթեր: Դիմումը և հայտը ներկայացվում է կոմիտեի ընդհանուր բաժին: Ներկայացված փաստաթղթերը պետք է ցուցադրեն անհրաժեշտ աշխատանքային փորձի տևողության համապատասխանությունը և ստացած բազային կրթությունը:

Վարչության կողմից ստուգվում է.

I. փորձառության համապատասխանությունը ՓԱՐԹ-66-ի 66.A.30 կետի պահանջներին:

### *66.A.30 Մասնագիտական փորձառության պահանջներ*

**(a)** *Վկայականի համար դիմորդը պետք է ունենա.*

**1.** *A կատեգորիայի, B1.2 և B1.4 ենթակատեգորիայի և B3 կատեգորիայի համար.*

- *3 տարվա գործնական աշխատանքային փորձ գործող օդանավի վրա, եթե դիմորդը չունի համապատասխան տեսական տեխնիկական պատրաստվածություն; կամ*
- *2 տարվա գործնական աշխատանքային փորձ գործող օդանավի վրա և լիազոր մարմնի համար բավարար տեխնիկական կրթական պատրաստվածություն որպեսզի նա համարվի որոկավորված աշխատող ավիացիայի ոլորտում; կամ*

*•1 տարվա գործնական աշխատանքային փորձ գործող օդանավի վրա և տեսական տեխնիկական պատրաստվածություն անցած լինի ՓԱՐԹ-147 կազմակերպությունում:*

**2.** *B2 կատեգորիայի, B1.1 և B1.3 ենթակատեգորիայի համար.*

*•5 տարվա գործնական աշխատանքային փորձ գործող օդանավի վրա, եթե դիմորդը չունի համապատասխան տեսական տեխնիկական պատրաստվածություն; կամ*
*•3 տարվա գործնական աշխատանքային փորձ գործող օդանավի վրա և լիազոր մարմնի համար բավարար տեսական տեխնիկական պատրաստվածություն որպեսզի նա համարվի որոկավորված աշխատող ավիացիայի ոլորտում; կամ*
*•2 տարվա գործնական աշխատանքային փորձ գործող օդանավի վրա և տեսական տեխնիկական պատրաստվածություն անցած լինի ՓԱՐԹ-147 կազմակերպությունում:*

3. *C կատեգորիայի համար՝ վերաբերվող մեծ օդանավերին.*
   *• 3 տարվա գործունեություն B1.1, B1.3 կամ B2 կատեգորիայի արտոնություններով մեծ օդանավի վրա կամ որպես օժանդակող մասնագետ համաձայն 143.A.35 կետի, կամ երկուսի համադրությամբ; կամ*
   *• 5 տարվա գործունեություն B1.2 կամ B1.4 կատեգորիայի արտոնություններով մեծ օդանավի վրա կամ որպես օժանդակող մասնագետ համաձայն 143.A.35 կետի, կամ երկուսի համադրությամբ;*

4. *C կատեգորիայի համար՝ ոչ մեծ օդանավեր. 3 տարվա գործունեություն B1. կամ B2 կատեգորիայի արտոնություններով ոչ մեծ օդանավի վրա կամ որպես օժանդակող մասնագետ համաձայն 143.A.35 կետի, կամ երկուսի համադրությամբ;*
5. *C կատեգորիայի համար ստացված ակադեմիական ճանապարհով. Դիմորդը ով ունի գիտական աստիճան տեխնիկական ոլորտում, համալսարանական կամ այլ կրթական համակարգից ճանաչված լիազորված մարմնի կողմից, պետք է ունենա 3 տարվա աշխատանքային փորձ քաղաքացիական ավիացիայի տեխսպասարկման ոլորտում ուղղակիորեն կապված օդանավի տեխսպասարկմանը, ներառելով իր մեջ 6 ամսվա բազային տեխսպասարկման աշջաղրանքների ուսումնասիրում:*

**(b)** *Վկայականում կատեգորիայի կամ ենթակատեգորիայի ավելացման համար հայտ ներկայացնող դիմորդի աշխատանքային փորձը պետք է համապատասխանի փորձի նվազագույն պահանջներին համաձայն հետևյալ աղյուսակի*

**(c)** *Աշխատանքային փորձը պետք է լինի գործնական և պետք է ընդգրկի տեխսպասարկման ոլորտի առաջադրանքների զգալի մասը:*

**(d)** *Առնվազն մեկ տարվա թարմ աշխատանքային փորձ օդանավի վրա կատեգորիային/ենթակատեգորիային համապատասխան, ըստ որի վկայականը նախկինում տրված է եղել: Գործող վկայականում կատեգորիա/ենթակատեգորիա ավելացնելու համար, անհրաժեշտ լրացուցիչ աշխատանքային փորձը կարող է լինել մեկ տարուց պակաս , բայց առնվազն երեք ամիս: Անհրաժեշտ աշխատանքային փորձը կախված է նախկինում տրված կատեգորիայի/ենթակատեգորիայի և ընդգրկման*

*ներկայացված կատեգորիայի տարբերությունից: Այդ աշխատանքային փորձը պետք է լինի տիպային, ինչպիսին որ նոր վկայականի կատեգորիա/ենթակատեգորիայի տրման համար:*

**(e)** *Չնայած (a) կետի պահանջների, օդանավի տեխսպասարկման փորձը, որը ձեռք է բերված քաղաքացիական ավիացիայից դուրս պետք է ընդունվի որպես համարժեք ՓԱՐԹ-66-ի պահանջներին լիազորված մարմնի կողմից մշակված ձևով:*

**(f)** *Վկայականի կամ կատեգորիայի/ենթակատեգորիայի ավելացման համար հայտ ներկայացնելուց նախորդ տաս տարվա ընթացքում ձեռք բերված աշխատանքային փորձն է ընդունվում:*

6. *B2L կատեգորիայի համար.*
   - *3 տարվա գործնական աշխատանքային փորձ գործող օդանավի վրա ներառելով պահանջվող սիստեմները, եթե դիմորդը չունի համապատասխան տեսական տեխնիկական պատրաստվածություն; կամ*
   - *2 տարվա գործնական աշխատանքային փորձ գործող օդանավի վրա ներառելով պահանջված սիստեմները և լիազոր մարմնի համար բավարար տեսական տեխնիկական պատրաստվածություն որպեսզի նա համարվի որոկավորված աշխատող ավիացիայի ոլորտում; կամ*
   - *1 տարվա գործնական աշխատանքային փորձ գործող օդանավի վրա ներառելով պահանջված սիստեմները և տեսական տեխնիկական պատրաստվածություն անցած լինի ՓԱՐԹ-147 կազմակերպությունում:*
7. *L կատեգորիայի համար.*
   - *2 տարվա գործնական աշխատանքային փորձ գործող օդանավի վրա, որի ընթացքում հավակնորդը մասնակցել է L կատեգորայի համար համապատասխան համակարգերի տեխսպասարկմանը:*

Փորձառության պահանջներին իր համապատասխանությունը դիմորդը պետք է ապացուցի ներկայացնելով կոմիտե ՓԱՐԹ-145 կազմակերպությունում արված աշխատանքների գրանցամատյաններ: Կատարված աշխատանքները պետք է լինեն բազմաբնույթ, որոնց կատարման ժամանակ պետք է կիրառված լինեն տարբեր գործիքներ և սարքավորումներ: Աշխատանքները պետք է կատարված լինեն արտադրության մեջ, շահագործվող օդանավերի վրա, հավաստագրող մասնագետի հսկողության տակ: Գրանցամատյանի ձևը պետք է մշակված լինի հիմք ընդունելով ԹԱԵԳ-ի TE.CAO.00129-001 „Maintenance Experience Logbook” ուղեցույցում ներկայացված նմուշը: Այն պետք է ընդգրկված լինի հաստատված „Տեխսպասարկման Կազմակերպության Ձեռնարկում”: Կատարված աշխատանքները պետք է ունենան հղումներ ձևակերպված փաստաթղթերի համարների վրա, որոնցով հնարավոր կլինի ստուգել կատարված աշխատանքների իսկությունը:

Համաձայն 66.A.30(e) կետի մասնագիտական փորձառությունը, ձեռք բերված միայն քաղաքացիական ավիացիայից դուրս (ռազմական ավիացիա, ոստիկանության ավիացիա, և այլն), բավարար չէ Կոմիտեի համար: B1, B2 կամ B3 կատեգորիայի արտոնությունների հավակնորդը պետք է լրացուցիչ ցուցադրի 12 ամսվա գործնական աշխատանքի փորձ քաղաքացիական ավիացիայում, իսկ A կատեգորիայի համար՝ 6 ամսվա:

II. Բազային կրթության համապատասխանությունը ՓԱՐԹ-66-ի 66.A.25 կետի պահանջներին:

***<u>66.A.25 Հիմնական գիտելիքների պահանջներ</u>***

**(a)** *ՓԱՐԹ-66 վկայականի կամ լրացուցիչ կատեգորիայի (ենթակատեգորիայի) դիմորդը, պետք է ցուցադրի համապատասխան առարկայի մոդուլի իր գիտելիքների մակարդակը քննությամբ, ըստ ՓԱՐԹ-66-ի Հավելված I-ի: Քննությունը պետք է ընդունված լինի ՓԱՐԹ-147 կազմակերպության կամ Լիազոր մարմնի կողմից:*

**(b)** *Ուսումնական դասընթացները և քննությունները պետք է ավարտված լինեն վկայականի կամ լրացուցիչ կատեգորիայի (ենթակատեգորիայի) համար դիմումը տալուց 10 տարուց ոչ ուշ ժամանակաշրջանում: Համենայն դեպս, այն չի կարող հանդիսանալ արգելք քննական „ՁԵՂՉ” տալու համար ըստ (c) կետի:*

**(c)** *Դիմորդը կարող է դիմել լիազորված մարմնին հիմնական գիտելիքների մասով ամբողջական կամ մասնակի քննական „ՁԵՂՉ” ստանալու համար եթե.*

1. *Բազային գիտելիքների քննությունները չեն համապատասխանում (b) կետի պահանջներին; և*
2. *Ստացած տեխնիկական որակավորումը լիզորված մարմինը գնահատում է համարժեք հավելված III-ի պահանջներին (ՓԱՐԹ-66):*

*„ՁԵՂՉ”-երը պետք է տրվեն համաձայն հավելված III-ի (ՓԱՐԹ-66) B մասի E ենթամասի:*

**(d)** *Լիազոր մարմնի տրամադրումից հետո „ՁԵՂՉ”-երը գործում են 10 տարի: Ժամկետի ավարտից հետո դիմորդը կարող է նորից դիմել ժամկետի երկարացման համար:*

Դիմորդը բազային կրթության պահանջներին իր համապատասխանությունը ցուցադրում է ներկայացնելով ՓԱՐԹ-147 ուսումնական հաստատության կողմից տրված վկայականով կամ Կոմիտեի կողմից ընդունելի ուսումնական հաստատության դիպլոմով կամ վկայականով: Սակայն պարտադիր է նաև համապատասխանությունը բազային գիտելիքների պահանջներին ապացուցել կոմիտեում հանձնելով առարկաների/Մոդուլների քննություններ կոմիտեի կողմից մշակված քննատոմսերով: Համապատասխանությունն առարկայի/Մոդուլի մասով կարելի է նաև ստանալ *Քննական զեղչի* միջոցով (<u>տես *ՔՆՆԱԿԱՆ ՁԵՂՉԵՐ* բաժինը</u>):

Եթե կան անհամապատասխանություններ դիմորդը տեղեկացվում է, որ մասով նա չի համապատասխանում փորձառության պահանջներին կամ, որ առարկայից/մոդուլից պետք է հանձնի քննություն վկայական ստանալու համար:

I-ին և II-րդ կետերի պահանջներին համապատասխանելու դեպքում բաժնի կողմից դիմորդին տրվում է ՓԱՐԹ-66 վկայական: Վկայականը տալուց ԱՄՍԲ աշխատակիցը լրացնում է Ձև 66/1 *Վկայայականի տրման արձանագրություն:*

Վկայականը համակարգչային եղանակով կազմվում, տպվում, հաստատվում և տրվում է մասնագետին: Վկայականը ստանալուց առաջ մասնագետը ստորագրում է վկայականում: Վկայականի պատճենը և տրման արձանագրությունը կցվում են ԱՄՍԲ-ում պահվող մասնագետի անձնական գործին:

# ՎԿԱՅԱԿԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ/ԵՆԹԱԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Մասնագետը վկայականում լրացուցիչ կատեգորիա/ենթակատեգորիա ավելացնելու համար պետք է կոմիտե ներկայացնի դիմում, հայտ (Ձև 19) և անհրաժեշտ փաստաթղթեր: Դիմումը և հայտը ներկայացվում է կոմիտե ընդհանուր բաժին: Ըստ ՓԱՐԹ-66-ի գիտելիքների պահանջները և մակարդակները տարբեր կատեգարիաների/ենթակատեգորիաների համար կարող են լինել տարբեր: Այդ պատճառով վկայականում մասնագետի արտոնությունների ավելացման համար հնարավոր է լրացուցիչ քննության կամ գործնական պարապունքների անհրաժեշտություն առաջանա:

Ըստ ՓԱՐԹ-66-ի անհրաժեշտ փորձառության պահանջները ըստ ավելացվող կատեգորիաների/ենթակատեգորիաների ներկայացված են հետևյալ աղյուսակում:

Աղյուսակ 1

| Որ / Որից | A1 | A2 | A3 | A4 | B1.1 | B1.2 | B1.3 | B1.4 | B2 | B2L | B3 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **A1** | – | 6 ամիս | 6 ամիս | 6 ամիս | 2 տարի | 6 ամիս | 2 տարի | 1 տարի | 2 տարի | 1 տարի | 6 ամիս |
| **A2** | 6 ամիս | – | 6 ամիս | 6 ամիս | 2 տարի | 6 ամիս | 2 տարի | 1 տարի | 2 տարի | 1 տարի | 6 ամիս |
| **A3** | 6 ամիս | 6 ամիս | – | 6 ամիս | 2 տարի | 1 տարի | 2 տարի | 6 ամիս | 2 տարի | 1 տարի | 1 տարի |
| **A4** | 6 ամիս | 6 ամիս | 6 ամիս | – | 2 տարի | 1 տարի | 2 տարի | 6 ամիս | 2 տարի | 1 տարի | 1 տարի |
| **B1.1** | ՈՉ | 6 ամիս | 6 ամիս | 6 ամիս | – | 6 ամիս | 6 ամիս | 6 ամիս | 1 տարի | 1 տարի | 6 ամիս |
| **B1.2** | 6 ամիս | ՈՉ | 6 ամիս | 6 ամիս | 2 տարի | – | 2 տարի | 6 ամիս | 2 տարի | 1 տարի | ՈՉ |
| **B1.3** | 6 ամիս | 6 ամիս | ՈՉ | 6 ամիս | 6 ամիս | 6 ամիս | – | 6 ամիս | 1 տարի | 1 տարի | 6 ամիս |
| **B1.4** | 6 ամիս | 6 ամիս | 6 ամիս | ՈՉ | 2 տարի | 6 ամիս | 2 տարի | – | 2 տարի | 1 տարի | 6 ամիս |
| **B2** | 6 ամիս | 6 ամիս | 6 ամիս | 6 ամիս | 1 տարի | 1 տարի | 1 տարի | 1 տարի | – | – | 1 տարի |
| **B2L** | 6 ամիս | 6 ամիս | 6 ամիս | 6 ամիս | 1 տարի | 1 տարի | 1 տարի | 1 տարի | 1 տարի | – | 1 տարի |
| **B3** | 6 ամիս | ՈՉ | 6 ամիս | 6 ամիս | 2 տարի | 6 ամիս | 2 տարի | 1 տարի | 2 տարի | 1 տարի | – |

B2 ⟹ A

B2 կատեգորիայի մասնագետը A կատեգորիայի արտոնություններ ստանալու համար բացի փորձառության պահանջներին համապատասխանելուց պետք է հանձնի նաև քննություններ Աղյուսակ 2-ում ընդգրկված մոդուլների/ ենթամոդուլների մասով՝ ըստ A կատեգորիայի ենթակատեգորիաների.

**Աղյուսակ 2**

| **Առկա կատեգորիան** | **Պահանջվող ենթակատեգորիա** | **Պահանջվող մոդուլ/ենթամոդուլ** |
|---|---|---|
| Առանց սիմանափակումների B2 կատեգորիա | Ցանկացած A ենթակատեգորիայի համար | Մոդուլ **7.8** –ից **7.13**-ը, **7.19 b**<br>Մոդուլ 8 ամբողջությամբ* |
| Առանց սիմանափակումների B2 կատեգորիա | A1, A2 | Մոդուլ **11.2** –ից **11.4**-ը, **11.7**, 11.13 |
| Առանց սահմանափակումների B2 կատեգորիա | A3, A4 | Մոդուլ 12.1–ից 12.6 -ը, 12.9,12.14, 12.16. |
| Առանց սիմանափակումների B2 կատեգորիա | A1, A3 | Մոդուլ 15 ամբողջությամբ |
| Առանց սիմանափակումների B2 կատեգորիա | A2, A4 | Մոդուլ 16 ամբողջությամբ |
| Առանց սիմանափակումների B2 կատեգորիա | A1, A2 | Մոդուլ 17 ամբողջությամբ |

* եթե մասնագետը B2 կատեգորիայի վկայական ստացել է ազգային վկայականի փոխարկման գործընթացով

B1 ⟹ B2

Օդանավի տեխսպասարկման B1 կատեգորիայի մասնագետի արտոնությունները ընդլայնելու և B2 կատգորիայի մասանգետի արտոնությունները ավելացնելու համար (բազային կրթության մասով) ամհրաժեշտ է ցուցադրել համապատասխանութուն հետևյալ աղյուսակում ընդգրկված ենթամոդուլների մասով:

Աղյուսակ 3*

| Առկա կատեգոր իան | Մոդուլ | Պահանջվող մոդուլ/ենթամոդուլ |
|---|---|---|
| **B1-1** | **4** | Մոդուլ 4.1.1 b; 4.1.2; 4.1.3b; 4.2; 4.3b. |
| | **5** | Մոդուլ 5.1-ից 5.3-ը; 5.5 b; 5.6b; 5.7-ից 5.10 –ը; Մոդուլ 7.4** |
| | 13 | Մոդուլ 13.1c; 13.3; 13.4; 13.6; 13.7 b; 13.8; 13.10; 13.20; 13.21; 13.22 |
| **B1-2** | **4** | Մոդուլ 4.1.1 b; 4.1.2; 4.1.3b; 4.2; 4.3b. |
| | **5** | Մոդուլ 5.1-ից 5.11-ը; 5.13; Մոդուլ 7.4** |
| | 13 | Մոդուլ 13.1 b, c;13.3-ից 13.8-ը;13.10;13.11;13.13;13.20;13.21;13.22. |
| **B1-3** | **4** | Մոդուլ 4.1.1 b; 4.1.2; 4.1.3b; 4.2; 4.3b. |
| | **5** | Մոդուլ 5.1-ից 5.3-ը; 5.5 b; 5.6b; 5.7-ից 5.10 –ը; Մոդուլ 7.4** |
| | 13 | Մոդուլ 13.1;13.3;13.4 ;13.6-ից13.8-ը;13.10;13.11;13.17;13.19- |
| **B1-4** | **4** | Մոդուլ 4.1.1 b; 4.1.2; 4.1.3b; 4.2; 4.3b. |
| | **5** | Մոդուլ 5.1-ից 5.11-ը; 5.13; Մոդուլ 7.4** |
| | 13 | Մոդուլ 13.1;13.3;13.4 ;13.6-ից13.8-ը;13.10;13.11;13.17;13.19-ից 13.22-ը |

* աղյուսակի պահանջները վերաբերվում են սահմանփակումներ չունեցող մասնագետներին

** Մոդուլ 7.4 կետը ընդգրկված է 5-րդ մոդուլի մեջ նպատակահարմարության տեսակետից ելնելով

B2 ⟹ B1

Օդանավի տեխսպասարկման B2 կատեգորիայի մասնագետի արտոնությունները ընդլայնելու և B1 կատգորիայի մասանգետի արտոնությունները ավելացնելու համար (բազային կրթության մասով) անհրաժեշտ է ցուցադրել համապատասխանութուն ըստ հաջորդող աղյուսակում ընդգրկված ենթամոդուլների մասով:

Աղյուսակ 4*

| Ինչ կատեգորիա է ավելացվում | Մոդուլ | Պահանջվող մոդուլ/ենթամոդուլ |
|---|---|---|
| **B1-1** | **2** | Մոդուլ 2.2.1; 2.2.2; 2.2.3; 2.2.4 b |
| | **6** | Մոդուլ 6.1.a; 6.2.a; 6.3.1.b; 6.3.2; 6.3.3; 6.4.b; 6.5.4; 6.6.b; 6.7; 6.10 |
| | **7** | Մոդուլ 7.6; 7.8 –ից 7.14-ը; 7.15.b; 7.16 b; 7.18 b և c ; 7.19 b; |
| | **8**** | Մոդուլ 8 ամբողջությամբ |
| | 11 | Մոդուլ 11.1; 11.2; 11.3; 11.4.2; 11.7-ից 11.13-ը; 11.16; 11.17 |
| | **15** | Մոդուլ 15.1-ից 15.13-ը; 15.15-ից 15.22 -ը. |
| | **17** | Մոդուլ 17 ամբողջությամբ |
| **B1-2** | **2** | Մոդուլ 2.2.1; 2.2.2; 2.2.3; 2.2.4 b |
| | **6** | Մոդուլ 6.1.a; 6.2.a; 6.3.1.b; 6.3.2; 6.3.3; 6.4.b; 6.5.4; 6.6.b; 6.7; 6.10 |
| | **7** | Մոդուլ 7.6; 7.8 –ից 7.14-ը; 7.15.b; 7.16 b; 7.18 b և c ; 7.19 b; |
| | **8**** | Մոդուլ 8 ամբողջությամբ |
| | 11 | Մոդուլ 11.1-ից 11.4-ը; 11.7; 11.9-ից 11.13-ը; 11.16; 11.17 |
| | **16** | Module 16.1-ից 16.9-ը; 16.11-ից 16.13-ը. |
| | **17** | Մոդուլ 17 ամբողջությամբ |
| **B1-3** | **2** | Մոդուլ 2.2.1; 2.2.2; 2.2.3; 2.2.4 b |
| | **6** | Մոդուլ 6.1.a; 6.2.a; 6.3.1.b; 6.3.2; 6.3.3; 6.4.b; 6.5.4; 6.6.b; 6.7; 6.10 |
| | **7** | Մոդուլ 7.6; 7.8 –ից 7.14-ը; 7.15.b; 7.16 b; 7.18 b և c ; 7.19 b; |
| | **8**** | Մոդուլ 8 ամբողջությամբ |
| | 12 | Մոդուլ 12.1-ից 12.6-ը; 12.9; 12.11-ից 12.14–ը; 12.16 |
| | **15** | Մոդուլ 15.1-ից 15.13-ը; 15.15 -ից 15.22 -ը |
| **B1-4** | **2** | Մոդուլ 2.2.1; 2.2.2; 2.2.3; 2.2.4 b |
| | **6** | Մոդուլ 6.1.a; 6.2.a; 6.3.1.b; 6.3.2; 6.3.3; 6.4.b; 6.5.4; 6.6.b; 6.7; 6.10 |
| | **7** | Մոդուլ 7.6; 7.8 –ից 7.14-ը; 7.15.b; 7.16 b; 7.18 b և c ; 7.19 b; |
| | **8**** | Մոդուլ 8 ամբողջությամբ |
| | 12 | Մոդուլ 12.1-ից 12.6-ը; 12.9; 12.11-ից 12.14–ը; 12.16 |
| | **16** | Մոդուլ 16.1-ից 16.9-ը; 16.11 -ից 16.13 -ը |

*աղյուսակի պահանջները վերաբերվում են սահմանփակումներ չունեցող մասնագետներին
** Եթե ՓԱՐԹ-66 B2 կատեգորիայի ՕՏՎ ստացվել է ազգային վկայականի փոխակերպումով

A ⟹ B1 կամ B2

Օդանավի տեխսպասարկման A կատեգորիայի մասնագետի արտոնությունները ընդլայնելու B1 կամ B2 կատգորիայի մասանգետի արտոնությունները ավելացնելու համար (բազային կրթության մասով) ամհրաժեշտ է ցուցադրել համապատասխանութուն ըստ հաջորդող աղյուսակներում ընդգրկված մոդուլների/ենթամոդուլների մասով:

**Աղյուսակ 5 Կատեգորիա A1-ից B1.1**

| Մոդուլ | Պահանջվող Մոդուլ/Ենթամոդուլ |
|---|---|
| **1** | B1 կատեգորիայի ամբողջ մոդուլի քննություն |
| **2** | B1 կատեգորիայի ամբողջ մոդուլի քննություն |
| **3** | B1 կատեգորիայի ամբողջ մոդուլի քննություն |
| **4** | B1 կատեգորիայի ամբողջ մոդուլի քննություն |
| **5** | B1 կատեգորիայի ամբողջ մոդուլի քննություն |
| **6** | B1 կատեգորիայի ամբողջ մոդուլի քննություն |
| **7** | 7.4 to 7.16, 7.18 & 7.20 |
| **8** | B1 կատեգորիայի ամբողջ մոդուլի քննություն |
| **10** | 10.5 & 10.7 |
| **11** | B1 կատեգորիայի ամբողջ մոդուլի քննություն |
| **15** | B1 կատեգորիայի ամբողջ մոդուլի քննություն |
| **17** | B1 կատեգորիայի ամբողջ մոդուլի քննություն |

**Աղյուսակ 6 Կատեգորիա A1-ից այլ B1 ենթակատեգորիայի**

| | Ըստ ենթակատեգորիաների տարբերությունները աղյուսակ 4-ից (B1.1-ից) | Պահանջվող Մոդուլ/Ենթամոդուլ |
|---|---|---|
| **B1-2** | M16-ը M15-ի փոխարեն | B1 կատեգորիայի ամբողջ մոդուլի քննություն |
| **B1-3** | M12-ը M11-ի փոխարեն | B1 կատեգորիայի ամբողջ մոդուլի քննություն |
| **B1-4** | M12-ը M11-ի փոխարեն<br>M16-ը M15-ի փոխարեն | B1 կատեգորիայի ամբողջ մոդուլի քննություն |

## Աղյուսակ 7 Կատեգորիա A1-ից B2

| Մոդուլ | Պահանջվող Մոդուլ/Ենթամոդուլ |
|---|---|
| **1** | B2 կատեգորիայի ամբողջ մոդուլի քննություն |
| **2** | B2 կատեգորիայի ամբողջ մոդուլի քննություն |
| **3** | B1/B2 կատեգորիայի ամբողջ մոդուլի քննություն |
| **4** | B2 կատեգորիայի ամբողջ մոդուլի քննություն |
| **5** | B2 կատեգորիայի ամբողջ մոդուլի քննություն |
| **6** | B2 կատեգորիայի ամբողջ մոդուլի քննություն |
| **7** | 7.4, 7.5, 7.7, 7.15a, 7.16a, 7.18c & e, 7.20 |
| **8** | B1/B2 կատեգորիայի ամբողջ մոդուլի քննություն |
| **10** | 10.5 & 10.7 |
| **13** | B2 կատեգորիայի ամբողջ մոդուլի քննություն |
| **14** | B2 կատեգորիայի ամբողջ մոդուլի քննություն |

# ՎԿԱՅԱԿԱՆՈՒՄ ՆՈՐ ՕԴԱՆԱՎԻ ՏԻՊԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Վկայականում օդանավի տիպի նոր որակավորում ավելացնելու համար դիմորդը Բաժին է ներկայացնում դիմում, հայտ՝ Ձև19, ՓԱՐԹ-66 (կամ ազգային) վկայականը, տվյալ տիպի որակավորում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթեր: Դիմումը և հայտը ներկայացվում է կոմիտեի ընդհանուր բաժին: Բաժինը ստուգում է ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը ՓԱՐԹ-66-ի 66.A.45 կետի պահանջներին և դրական արդյունքի դեպքում մասնագետին տրվում է նոր վկայական ավելացված տիպի որակավորումով: Կազմվում է փոխարինման արձանագրություն և կցվում է անձնական գործին:

### *66.A.45 Օդանավի որակավորման հաստատումը*

***(a)*** *Որպեսզի վկայականի տերը իրավունք ունենա կիրառել իր հավաստագրելու արտոնությունը կոնկրետ տիպի օդանավի վրա, տվյալ օդանավի տիպի որակավորումը վկայականում պետք է հաստատված լինի:*

*B1, B2 և C կատեգորիաների համար համապատասխան օդանավերի տիպերի որակավորումները հետևյալներն են.*

*1. 1-ին խմբի օդանավերի համար, համապատասխան օդանավի տիպի որակավորում:*

*2. 2-րդ խմբի օդանավերի համար, համապատասխան օդանավի տիպի որակավորում, արտադրողի ենթախմբի կամ ամբողջ ենթախմբի որակավորում:*

*3. 3-րդ խմբի օդանավերի համար, ամբողջ խմբի որակավորում:*

*B3 կատեգորիայի համար համապատասխան որակավորումն է <<միացային շարժիչով, չճնշարկվող 2000 կգ և պակաս մաքսիմալ վերթիռային զանգվածով օդանավ (ՄՎԹԶ)>>(MTOM):*

*A կատեգորիայի համար համապատասխան որակավորում անհրաժեշտ չէ, բավարար է համապատասխանությունը ՓԱՐԹ-145 145.A.35 կետին:*

***(b)*** *Օդանավի տիպի որակավորման հաստատման համար անհրաժեշտ է, B1, B2 կամ C կատեգորիաների, համապատասխան օդանավի տիպի ուսուցում:*

***(c)*** *Ի հավելումն (b) կետի պահանջի, առաջին օդանավի տիպի որակավորման հաստատումը տվյալ կատեգորիայում/ենթակատեգորիայում անհրաժեշտ է հավաստագրել գործնական ուսուցման հաջող (նկարագրված ՓԱՐԹ-66-ի հավելված III-ում) ավարտից հետո :*

*(d) Ի տարբերություն **(b) և (c)** կետերի, 2-րդ և 3-րդ խմբի օդանավերի համար, օդանավի որակավորում կարող է տրվել.*

- *համապատասխան օդանավերի տիպերի որակավորման դասընթացների բավարար համապատասխանությունն ըստ ՓԱՐԹ-66 պահանջների; և*
- *B1 և B2 կատեգորիաների դեպքում, օդանավի տիպի վրա գործնական փորձառության ցուցադրում: Այդ դեպքում գործնական փորձառությունը պետք*

*է ընդգրկի համապատասխան կատեգորիայի տեխսպասարկման ոլորտի առաջադրանքների գործառույթները:*

*C կատեգորիայի դեպքում, ակադեմիական կոչում ունեցող մասնագետի համար արվում է համաձայն **<u>Մասնագիտական փորձի պահանջներ</u>** պարագրաֆի, առաջին համապատասխան օդանավի տիպի որակավորման քննությունը ընդունվում է B1 և B2 կատեգորիաների մակարդակով:*

*(e) 2-րդ խմբի օդանավերի համար.*

*1. B1 և C կատեգորիա ունեցողների համար օդանավ արտադրողի ենթախմբի որակավորման հաստատման համար, անհրաժեշտ է համապատասխանություն առնվազն տվյալ արտադրող ընկերության երկու օդանավի տիպի որակավորման, որոնք միասին ներկայացնում են տվյալ արտադրողի ենթախումբը:*

*2. B1 և C կատեգորիա ունեցողների համար ամբողջ ենթախմբի որակավորման հաստատման համար, անհրաժեշտ է համապատասխանություն առնվազն տվյալ ենթախմբի տարբեր արտադրող ընկերությունների կողմից արտադրվող առնվազն երեք օդանավի տիպի որակավորման, որոնք միասին ներկայացված են տվյալ ենթախմբումբը*

*3. B2 կատեգորիայի դեպքում արտադրողի ենթախմբի և ամբողջ ենթախմբի որակավորման հաստատման համար ահրաժեշտ է ցուցադրել գործնական փորձառություն, որը ընդգրկում է տեխսպասարկման գործընթացի ոլորտները կիրառելի ենթախմբի օդանավերի համար:*

*(f) 3-րդ խմբի օդանավերի համար.*

*1. 1. B1, B2 և C կատեգորիաների համար ամբողջ 3-րդ խմբի օդանավերի որակավորման հաստատման համար անհրաժեշտ է ցուցադրել գործնական փորձառություն, որը ընդգրկում է տեխսպասարկման գործընթացի ոլորտները կիրառելի 3-րդ խմբի օդանավերի և վկայականի կատեգորիայի համար:*

*2. B1 կատեգորիայի համար, մինչև դիմորդը չցուցադրի համապատասխան ակնառու փորձառություն, 3-րդ խմբի որակավորումը պետք է սահմանափակվի, որի մասին պետք է կատարվի գրառում վկայականում.*

- *Ճնշարկվող օդանավեր*
- *Մետաղական կառուցվածքով օդանավեր*
- *Կոմպոզիտ կառուցվածքով օդանավեր*
- *Փայտյա կառուցվածքով օդանավեր*
- *Ծածկված կտորով մետաղախողովակային կառուցվածքով օդանավեր*

*(g) B3 կատեգորիայի վկայականի համար.*

